



ՔԱՂԱՔԱՔԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիեննա, 26 Մարտ, 1893:

Գերմանիոյ մէջ զինուորական օրէնքը նաեւ երկրորդ ընթերցման մերժուեցաւ յանձնաժողովէն, վասն զի թէ տէրութիւնը պնդեց իւր պահանջմանց վրայ եւ թէ միւս կողմանէ կողմնակցութիւնը ետ չկեցան պահանջելէն որ այն չափազանց զինուորական պահանջմունք մնողացունին: Այժմ խորհրդանոցին պարագայ օրերը լուր կը պատի թէ խորհրդանոցը լուծուելու խնդիրը մօտալուտ է, վասն զի յոյս չկայ որ զինուորական ըլլան երկու կողմանէ:

Անգղիոյ մէջ ընդ հակառակն Իռլանդական օրէնքն ընդունուեցաւ առաջին ընթերցման. երկրորդ ընթերցումն թէեւ յապաղեցաւ Զատիկէն ետքը թողլով, բայց տէրութիւնը յուսով է որ պիտի յաջողի ընդունիլ տալ, այնու մասնաւոր իր հակառակ կուսակցութեան ըրած ծիգը՝ տէրութեան ընթացից դէմ՝ դարձանաց առաջարկութիւն մը քուարկելու մերժուեցաւ մեծամասնութեամբ: Նաեւ որոշուեցաւ երեսփոխանաց ռոճիկ տալ, ինչպէս սովորութիւն է արդէն միւս տէրութեանց մէջ:

Անգղիոյ թագուհին Իտալիա կ'անցնէ այս ամառն Փիորենցայի մօտ ամառանոցի մը մէջ: Նաեւ Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին Իտալիոյ արքունեաց այցելութեան պիտի երթան, վասն զի Իտալիոյ թագաւորն ու թագուհին Ապրիլի մէջ իրենց ամուսնութեան արծաթեայ յոբելեանը պիտի կատարեն: Այս առթիւ լուր կայ թէ տոյն տէրութեանց եւ Իտալիոյ արտաքին գործոց պաշտօնայք տեսակցութիւններ պիտի ընեն:

Գաղղիոյ մէջ Փանամայի դատը գոնէ պաշտօնապէս աւարտեցաւ, վասն զի

դատաւստանց իրենք վճիռը տուին: Բայց գործնականօրէն դեռ չէ լմացած, եւ ամէն օր նոր յայտնութիւնք կ'ըլլան, եւ մօտակայ ընտրութեանց մէջ հասարակապետականք կը վախճան հարուած մ'առնուլ, որոնք արդէն մեծ կորուստ ըրին ծերակուտի նորընտիր գահերիցուն ժուլ Փէրիի մահուամբ: Փարիզի կոմսը հրաւեր մը հրատարակած է միապետական կողմնակցութեան, որ անշուշտ մեծ ազդեցութիւն պիտի ընէ ժողովրդեան վրայ:

Սպանիոյ մէջ նոր ընտրութիւնք եղան եւ Սակաստայի կողմնակիցը ծայնից մեծ առաւելութիւն շահեցան: Ընտրութիւնք եղան նաեւ Ի Սեռուիա, ուր Ազատականք փոքր ծայնի առաւելութիւն ունեցան Արմատականներէն: Աստորիոյ դրոշմունքն Ի Տրեզտէն առողջապահական ժողովք մը զուգարեցաւ տէրութեանց ներկայացուցիչներուն, որոնք նպատակն է քննել թէ մարդայնոյ դէմ ինչ կերպով միակերպ միջոցներ առնուլ կրնան տէրութիւնք որ համաձայնակին առջեւն առնուի դիրութեամբ:



ԲՈՎԱՆԳԱՌԻԹԻՒՆ

ՌԵՍԵՆՏԻՆԵՆ

ՄԱՏԵՆԻՆԳՐԱՅԱՆ — Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատենանք. 97:

ՊԱՏՄԱՅԱՆ — Նոյսաբեթուպոլսոյ պատմութեան մէջ երկու միջանկեալ գլուխ. 102:

ԱԶԳԱՆԵՐԱՅԱՆ — Հայ գիւղական տունը. (Պատկերաւ.) 105:

ԲԺՇԿԱՅԱՆ — Միջին ու նոր բժշկական գրութիւնք. 111:

ԳՐԱՅԱՆ — Մովսէս Խորենացի եւ Պարթեւաց ծագումը. 116: — Զինոք Գլուխ. 121:

ՅՐԱԿԵՍԳԻՏԵՆ

ՄՐՈՒԹՅԱՅԱՆ — Ժամացոյց. (Պատկերաւ.) 124:

ՔՈՂԱՔԱՔԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 128:



ՀՐԱՏԱՐԱՅԻՆ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՅԻՆ ԽՄԱՐԱԳԻՐ

Է. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ. ԽԻԻ ԲԱՐԵՆՆ ԶԱՐԱՆ